

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ
(ՊՈԱԿ)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

Ք. ԱՐԱՐԱՏ 2023Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3-11
Կրթական ծրագրեր	12
Ակադեմիկական կազմ	13
Ուսանողներ	14
Շրջանավարտներ	15-16
Կազմակերպչական աշխատանքներ	17-18
Ընդունելություն	19-20
Ենթակառուցվածքներ	21-77
Կառավարման խորհուրդ	78-79

ՆԱԽԱԲԱՆ

Արարատի պետական քոլեջը 2022-2023 ուսարվա գործունեության հաշվետու ժամանակաշրջանի ավարտին փորձում է հանրագումարի բերել անցնող տարվա ձեռքբերումներն ու թերացումները: Այդ գործընթացում ևս մեկ անգամ տեսանելի դարձնելով մեր հաջողությունները՝ մենք ավելի ինքնավստահ ենք կազմում ապագայի ծրագրերը, ավելի թիրախավորված ենք դարձնում հետագա աշխատանքները:

2022-2023 ուստարին նախանշված ծրագրերի իրագործման տարի էր: Քոլեջի համալրման ու թողարկման պատկերը կրկին հավաստեց, որ ԱՊԲ-ն շարունակում է բարձր պահել իր վարկանիշը. միջին և նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթություն ընտրող դիմորդների համար տարածաշրջանում թիվ 1-ին, իսկ մեր շրջանավարտները աշխատաշուկայում պահում են կայուն ու մրցունակ դիրք:

Միջազգայնացման հարթակում քոլեջը նոր ու բարձր նշաձողի է ձգտում: Մեր գործունեության արդյունավետ ուղղությունների շարքը շարունակելի է՝ գործատուների հետ համագործակցության սերտացում, հեղինակավոր ընկերությունների, նաև պետական կառույցների հետ հուշագրերի ստորագրում, կրթական ծրագրերի արդիականացում, վերապատրաստման դասընթացների ներդրում, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների աշխուժացում և այլն:

Անցնող ուստարում մեզ հաջողվեց իրագործել ԱՊԲ 2022-2023 զարգացման ռազմավարությամբ նախանշված գործողությունների ծրագիրը:

Այս ամենի հանգամանալից մանրամասները, փաստական վավերացումները, ինչպես նաև ԱՊԲ ուսումնական և ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը սիրով ներկայացնում ենք:

Վստահ եմ՝ մեր քոլեջի արհեստավարժ մասնագետների, բանիմաց դասախոսների ու հրաշալի ուսանողների հետ մենք շարունակելու ենք ավելի ու ավելի ամրացնել նախնական մասնագիտական / արհեստագործական / և միջին մասնագիտական կրթության և մեր երկրի բարենորոգ ապագայի կերտման հիմքերը:

Որակյալ կրթություն

Ըստ ԱՊԹ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Որակյալ կրթություն» ռազմավարական նպատակի՝ 2021-2022 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Վերանայել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի նորմատիվ փաստաթղթերը:
- Վերամշակել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ ծրագրեր՝ շրջանավարտների մրցունակությունը բարձրացնելու նպատակով:
- Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ:
- Ստեղծել դասավանդումը և ուսումնառությունը խթանող նորագույն մեխանիզմներ:
- Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներքուլեջային մեխանիզմներ, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:
- Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության ժամանակակից փորձը՝ կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:
- Ներդնել և շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար:
- Վերապատրաստել մանկավարժական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման ուղղությամբ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2.

Հանրանային ներգրավում և ծառայություններ

Ըստ ԱՊՔ զարգացման ուղղվածության և գործողությունների ծրագրի «Հանրանային ներգրավում և ծառայություններ» ուղղվածության նպատակի՝ 2021-2022 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը:
- Հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապի ամրապնդման և մշտադիտարկման համակարգը զարգացնելու նպատակով 2022 թվականի ապրիլ ամսին կազմակերպվեց «Կրթություն և կարիերա EXPO 2022» ներքուլեռային միջոցառումը: Քոլեջ այցելեցին տարածաշրջանի դպրոցների աշակերտներ, գործատուներ, Միասնական սոցիալական ծառայության, Արարատ խոշորացված համայնքի աշխատակազմը:
- Ընդլայնվել է ԱՊՔ-ի ներգրավումը հանրային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները: Ավելին՝ ընդգրկված ենք ԱՊՀ երկրների միջին և նախնական /արհեստագործական/ կրթական միասնական մոդելի կազմման գործընթացը համակարգող միջազգային հասարակական կազմակերպության կազմում: Համագործակցում ենք Մոլդովեչնոյի պոլիտեխնիկական քոլեջի հետ, ըստ համատեղ կազմված տարեկան ծրագրի:
- Պարբերաբար ուսումնասիրվում է տարածաշրջանային պահանջարկը:
- Մշակվել են հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր:
- Բարելավվել է լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3

Որակյալ մարդկային ռեսուրսներ

Ըստ ԱՊԲ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Որակյալ մարդկային ռեսուրսներ» ռազմավարական նպատակի՝ 2022-2023 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը:
- Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմեր:
- Ստեղծվել է մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր:
- Բարձրացվել է աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4

Որակյալ ենթակառուցվածքներ

Ըստ ԱՊԲ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Որակյալ ենթակառուցվածքներ» ռազմավարական նպատակի՝ 2022-2023 ռատարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Մշտապես արդիականացման և վերազինման աշխատանքներ են կատարվում քոլեջի ուսումնական մասնաշենքի և բակի տարածքում:
- Մշակել տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգ:
- «Արդիականացնել քոլեջային տեղեկատվական համակարգը:
- Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5.

Որակյալ ծառայություններ

Ըստ ԱՊՔ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Որակյալ ծառայություններ» ռազմավարական նպատակի՝ 2022-2023 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Ուսումնասիրվում են ուսանողների կրթական և այլ կարիքները,
- Մշտապես բարելավվում են ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի, խորհրդատվության և ուսանողական դասընթացների համակարգը:
- Բազմաբնույթ կրթական միջոցառումներին մասնակցելով քոլեջը նպաստում է ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը, շրջանավարտների հետ Քոլեջի շարունակական կապը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 6.

Ընդունելության բազմազանեցում և համապատասխանեցում

Ըստ ԱՊՔ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի

«Ընդունելության բազմազանեցում և համապատասխանեցում» ռազմավարական նպատակի՝ 2022-2023 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգ:
- Ընդլայնել Քոլեջում ԵՊՀ-ի կողմից դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաների անցկացումը:
- Դպրոցների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Քոլեջ:
- Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները տարածաշրջանում: Ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:
- Ընդլայնել բուհերի հետ համագործակցության շրջանակները:
- Քոլեջի դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում իրազեկման դասախոսություններ կազմակերպելու համար:

ԴԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 7.

Ֆինանսական կայունության արդյունավետ կառավարում

Ըստ ԱՊԲ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Ֆինանսական կայունության արդյունավետ կառավարում» ռազմավարական նպատակի՝ 2022-2023 ռատարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Նպաստել Քոլեջի ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ կրթական տարբեր ծրագրերին մասնակցելու միջոցով,
- Յուրաքանչյուր տարի վերանայել ուսման վարձավճարները՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների՝ պայմանավորված շուկայական գործոններով,
- Կանոնակարգել Քոլեջի վճարովի ծառայությունները,
- Մշակել և իրականացնել ռեսուրսափնայողության գործառույթներ:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

Պետական հավատարմագրում ունենալը միջին մասնագիտական ուսումնական հաստատության կայուն գործունեության և զարգացման երաշխիքներից մեկն է: ԱՊԲ-ն 2020 թվականի հուլիսի 9-ին դիմում-հայտ էր ներկայացրել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»՝ հավատարմագրման կարգի համաձայն: Արդյունքում, ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի՝ 2021 թվականի հուլիսի 24-ի № 57 որոշմամբ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2022-2023 ուստարում ԱՊԲ-ում միջին մասնագիտական կրթական ծրագրով հիմնական և միջնակարգ կրթության հիմքով/ իրականացվել է ուսուցում հետևյալ մասնագիտությունների գծով.

1. 0413.02.5 –«Սպասարկման կազմակերպում»,
2. 0412.01.5 - «Ֆինանսներ»,
3. 0411.01.5 –«Հաշվապահական հաշվառում»,
4. 0414.01.5- «Շուկայաբանություն»,
5. 0613.02.5-«Համակարգչային գեղարվեստական նախագծում»,
6. 0613.01.5 - «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»,
7. 0112.01.5 - «Նախադպրոցական կրթություն»,
8. 1012.02.5 - «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»,
9. 0916.01.5 - «Դեղագործություն»:

Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրով .

1. 1013.03.4- «Խոհարարական գործ» /հիմնական կրթության հիմքով/,
2. 0721.03.4-«Գինեգործություն և հյութերի արտադրություն» /հիմնական կրթության հիմքով/,

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄ

2022-2023 ուստարում քոլեջում աշխատել են 42 դասախոս և արտադրական ուսուցման 4 վարպետ: Բոլոր դասախոսները ունեն բարձրագույն կրթություն: Արտադրական ուսուցման վարպետներից երկուսն ունեն բարձրագույն, երեքը՝ միջին մասնագիտական կրթություն: Դասախոսները սահմանված կարգով մասնակցել են մասնագիտական և մեթոդական վերապատրաստումներ: Դասախոսական անձնակազմում ընդգրկված են, ինչպես բազմամյա մանկավարժական փորձ ունեցող դասախոսներ, այնպես էլ երիտասարդ՝ բարձր որակավորում ու խորը գիտելիքներ ունեցող մասնագետներ: Քոլեջի դասախոսական կազմը պարբերաբար մասնակցում են համագործակցության պայմանագիր կնքած բուհերի համապատասխան ամբիոնների դասախոսների հետ կազմակերպվող սեմինարներին, փորձի փոխանակում իրականացնում այլ ուսումնական հաստատությունների մասնագետների հետ՝ հարստացնելով և թարմացնելով ունեցած գիտելիքները:

Քոլեջի դասախոսները կատարելագործում են իրենց մանկավարժական գիտելիքները նաև մանկավարժամեթոդական և դաստիարակչական բնույթի զեկույցներով՝ հանդես գալով քոլեջի մեթոդական խորհրդի, մանկավարժական խորհրդի և ամբիոնների նիստերում, ակտիվ մասնակցություն ցուցաբերում քոլեջի հասարակական կյանքին: Ուսումնական տարվա ընթացքում իրենց կազմակերպված արդյունավետ և շնորհալի աշխատանքով աչքի են ընկել դասախոսներ Ս. Աբրահամյանը, Ռ. Վարդազարյանը, Ն. Հարությունյանը, Ա. Սարգսյանը, Ա. Մկրտչյանը, Ա. Սահակյանը, Մ. Խաչատրյանը, Գ. Վարդանյանը, Մ. Մարգարյանը, Գ. Ստեփանյանը, Ռ. Մովսիսյանը, Վ. Բադալյանը, Լ Մարտիրոսյանը և ուրիշներ:

Սովորողների շարժը

№	Ուսանողների շարժ	Ուսանողների թիվը			Վարձի չափը			Սեռը		Կուրսերը			
		ընդ.	Այլա ուսուցում										
			անվճար.	վճարով.	99000	110000	120000	արական	իգական	I	II	III	IV
1	Ուսանողների թիվը տարվա սկզբում	623	370	253	57	77	119	359	264	222	198	183	
2	Ուսանողների թիվը տարվա վերջում	583	353	230	53	75	102	338	245	205	197	181	
3	Եկել են տարվա ընթացքում	8	5	3	-	-	3	8	-	-	-	8	
4	Չորակազմել են	5	1	4	4	-	-	5	-	-	-	5	
5	Ավարտել են	181	119	62	54	1	5	105	76	-	-	181	
6	Փոխադրվել են	402	240	162	3	70	89	217	185	-	201	185	16
7	Գերազանցության ունիան են ստացել	49	45	4	-	-	4	18	37	-	-	49	

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

2022-2023 ուսումնական տարվա պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց ըստ ուսումնական գրաֆիկի և սահմանված ժամանակացույցի: Պետական ամփոփիչ ստուգմանը թույլատրվել են 182 սովորող, որից 153-ը միջին մասնագիտական կրթական ծրագրով, 29-ը՝ նախնական (արհեստագործական) կրթական ծրագրով: Միջին մասնագիտական կրթական համակարգից մեկ ուսանող չի մասնակցել պետական ամփոփիչ ստուգմանը և չի ստացել մասնագիտական որակավորում:

Գերազանցության դիպլոմ ստացել են 49 ուսանող, որից 48-ը միջին մասնագիտական կրթական համակարգից, 1-ը նախնական մասնագիտական /արհեստագործական/, սովորական ավարտական փաստաթուղթ՝ 132 ուսանող, որից 104-ը՝ միջին մասնագիտական կրթական համակարգից, 28-ը՝ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական համակարգից :

Պետական քննություններում գրանցվել է որակական հետևյալ առաջադիմությունը.

0411.01.5 - «Հաշվապահական հաշվառում»

Մասնագիտական մի քանի առարկաներից ու մասնագիտական մոդուլներից

28 ուսանող - 75%

0413.02.5 - «Սպասարկման կազմակերպում»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

29 ուսանող - 33%

0412.01.5- «Ֆինանսներ»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

26 ուսանող - 92%

0112.01.5 - «Նախադպրոցական կրթություն»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

19 ուսանող - 100%

0414.01.5 - «Շուկայաբանություն»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

20 ուսանող - 95%

0613.02.5 - «Համակարգչային գեղարվեստական նախագծում»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

14 ուսանող - 43%

1012.02.5 -«Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»

Համալիր քննություն մասնագիտական մի քանի առարկաներից և մոդուլներից

10 ուսանող – 10%

0916. 01.5-«Դեղագործություն»

Մասնագիտական քննություն մասնագիտական մի քանի մոդուլներից

6 ուսանող - 83%

1013.03.4 -«Խոհարարական գործ»

Համալիր քննություն մասնագիտական մոդուլներից

11 ուսանող - 9%

0721.03.4-« Գինեգործություն և հյուրերի արտադրություն »

Համալիր քննություն մասնագիտական մոդուլներից

18 ուսանող - 44%

Միջին մասնագիտական կրթական համակարգից ԲՈՒՀ-երում կրթությունը շարունակելու են 72 շրջանավարտ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2022-2023 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքները սկսվել են հուլիս ամսից և ավարտվել օգոստոսի 31-ին, որին զուգահեռ ընթացել է ընդունելության գործընթացը: Ուսումնական գործընթացը կազմակերպվել է ուսումնական հաստատության ուսումնական պլաններով և ծրագրերով, տարեկան աշխատանքային և վերահսկողության պլաններով, որոնք ուղեցույց են հանդիսացել ամբողջ ուսումնական տարվա համար : Ժամանակին կատարվել է դասաբաշխում, կազմվել դասախոսների տարեկան ծանրաբեռնվածությունների, բաց դասերի, փոխադարձ դասալսումների, պարտադիր ստուգողական աշխատանքների, առարկայական հանձնաժողովների նիստերի անցկացման գրաֆիկները: Առարկակայան հանձնաժողովներում քննարկվել են ուսումնական ծրագրերը, օրացուցային թեմատիկ պլանները և ներկայացվել հաստատման: Քոլեջի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով կազմվել են տնօրինական, մանկավաժական, տարիֆիկացիոն, կուրսղեկական, գրադարանային, թոշակավորման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների, քոլեջի ներքին գնահատման, որակի, գնումների, մեթոդական, ներքոլեջային վերահսկողության հանձնաժողովներ և խորհուրդներ: Նշանակվել են կուրսղեկներ և կաբինետի վարիչներ: Ուսումնական գործընթացի կազմակերպմանը անմիջական և ակտիվ մասնակցություն է ունեցել մանկավաժական բաժինը:

Բաժնում ընդգրկված դասախոսների վարիչների, մեթոդխորհրդի, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարվել է 314 ժամ դասալսում, բաժններն անցկացրել են 10 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնամեթոդական հարցեր, տարբերակված ստուգարքների հարցաշարեր, պետական քննական տոմսեր, թեստեր ու այլ հարցեր: Կազմակերպվել է 9 բաց դաս, ուսումնասիրվել է 3 առարկայի դասավանդման դրվածք: Դասախոսների տեսական, գիտական և մեթոդական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ամբիոնում ներկայացվել են 16 մեթոդական զեկույցներ՝ հայոց լեզվից, ռուսաց լեզվից, օտար լեզվից, մարքեթինգային հմտություններից, կենսաբանությունից, գինեգործությունից, ֆիզիկական կուլտուրայի, իրավունքից, դեղագործությունից, քաղաքացիական պաշտպանությունից,

տնտեսագիտությունից, ճանապարհային երթևեկության անվտանգությանը վերաբերող թեմաներից:

Ամբիոնների և ուսումնական մասի ուշադրության կենտրոնում եղել են պարտադիր ստուգողական աշխատանքների կատարումը, ստուգումը և օբյեկտիվ գնահատումը: Ինչպես նաև մոդուլների արդյունքների հանձնման գործընթացի լիարժեք և հետևողական կազմակերպումը:

Քուլեջի որական առաջադիմությունը կազմում է 35,5%:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<p style="text-align: center;">ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ (Նշել ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 29 հուլիսի 2019թ. N 418-Ա/2 հրամանի N 45 հավելվածի համապատասխան)</p>	<p style="text-align: center;">Ընդունելության տեղերի թիվը (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված))</p>			<p style="text-align: center;">Դիմորդ ների թիվը</p>	<p style="text-align: center;">2022թ. փաստացի ընդունվածների թիվը ըստ մասնագիտությունների</p>		
	Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	Ընդամենը		Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	Ընդամենը
Հաշվապահական հաշվառում	0	20	20	2	0	2	2
* Հաշվապահական հաշվառում	8	22	30	30	8	22	30
Ֆինանսներ	0	20	20	1	0	1	1
* Ֆինանսներ	7	23	30	30	7	23	30
Սպասարկման կազմակերպում	0	20	20	0	0	0	0
* Սպասարկման կազմակերպում	17	13	30	30	17	13	30
Շուկայաբանություն	0	20	20	0	0	0	0
* Շուկայաբանություն	8	17	25	25	8	17	25
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	0	10	10	1	0	1	1
* Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	17	3	20	21	17	3	20
Համակարգչային գեղարվեստական նախագծում	0	10	10	0	0	0	0
* Համակարգչային գեղարվեստական նախագծում	10	5	15	16	10	5	15
Նախադպրոցական կրթություն	0	15	15	1	0	1	1
* Նախադպրոցական կրթություն	15	10	25	17	15	2	17
Դեղագործություն	0	20	20	0	0	0	0
* Դեղագործություն	0	20	20	0	0	0	0
Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	0	20	20	1	0	1	1
* Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	9	16	25	15	9	6	15
Ընդամենը	91	284	375	190	91	97	188

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ /ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(նշել ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 12-ը հուլիսի 2019թ. N 319-Ա/2 հրամանի համապատասխան)	Ընդունելության տեղերի թիվը (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված)			Դիմորդների թիվը	2022թ. փաստացի ընդունվածների թիվը ըստ մասնագիտությունների		
	Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	Ընդամենը		Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	Ընդամենը
* Խոհարարական գործ	13	7	20	21	13	7	20
Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում	0	20	20	0	0	0	0
Կարի արտադրության տեխնոլոգիա	15	5	20	0	0	0	0
* Գինեգործություն և հյուպերի արտադրություն	18	2	20	20	18	2	20
Գինեգործություն և հյուպերի արտադրություն	7	13	20	0	0	0	0
Ընդամենը	43	47	100	41	31	9	40

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քոլեջի վարչատնտեսական աշխատանքները ՀՀ ԿԳՆՄՍ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսումնական մասնաշենքի, գույքի, մասնաշենքին կից այգու տարածքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, քոլեջի սանիտարահիգիենիկ վիճակի, քոլեջի ուսումնական պարապմունքներին, լսարանների և կաբինետների ժամանակին նախատեսման ջեռուցման, անվտանգ գործարկման, հակահրդեհային պաշտպանության, սպասարկող անձնակազմի գործառույթների /աշխատանքի/ կազմակերպման, քոլեջի ուսումնանյութական բազան հարստացնելու, պահպանելու և ամրապնդելու համար 2022-2023 ուստարում կատարվել են հետևյալ աշխատանքները.

ա/ 2022-2023 ուստարվա աշխատանքային գործունեության պլանի և զարգացման ռազմավարության գործողությունների ծրագրի 2022թ. օգոստոսի 30-ին քոլեջի ուսումնական մասնաշենքը՝ լսարաններով, կաբինետներով և այլն, պատրաստ է եղել սկսելու 2022-2023 ուսումնական տարվա գործունեությանը:

բ/ Քոլեջի ուսումնական մասնաշենքում, այգու և բակի տարածքում ըստ անհրաժեշտությամբ իրականացվել է մասնակի վերանոգման աշխատանքներ, փաստաթղթերի կազմման, աշխատանքների կատարման հսկողության կազմակերպման գործառույթների իրականացման:

գ/ Քոլեջի ուսումնական մասնաշենքի պահակային ծառայության, սպասարկող անձնակազմի, այգեպանի, ձմռանը կաթսայատան աշխատակիցների աշխատանքային գործառույթների աշխատանքի անվտանգության, հակահրդեհային պաշտպանության և այլ հանձնաժողովների կատարմանը հաստատված քոլեջի տնօրենի կողմից հրամանով, իսկ գործառույթների կատարման հսկողությունը իրականացվել է կանոնակարգի՝ սահմանված կարգով:

դ/ Քոլեջի ուսումնական և նյութատեխնիկական բազայի հարստացմանը ըստ քոլեջի տնօրենի կողմից նախատեսված ծրագրի:

ե/ Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում քոլեջում օգտագործվող տեխնիկական բազայի հարստացմանը աշխատանքային գործունեությունների իրականացմանը:

է/ Քոլեջի բուժկետի անխափան գործունեությունը՝ դեղորայքով և վերահսկմամբ ապահովելու համար ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:

ը/ 2022-2023 ուստարում ՀՀ կառավարության որոշումների համաձայն քոլեջի տնօրենի հանձնարարությամբ, տարբեր հրամանների պահանջի կատարման համար քոլեջի ուսումնական շենքի՝ լսարաններ, կաբինետների և այլ սենյակների, անհրաժեշտ բակային տարածքների ախտահանման՝ COVID-19-ի և այլ հիվանդությունների համապատասխան հեղուկներով և նյութերով, իսկ քոլեջի աշխատակիցների համար 2022-2023 ուստարվա բժշկական քննության անցնելու և սանիտարական գրքույկում նշվելու համար:

2. Քոլեջի տնօրենի հրամանով պահանջված ժամկետում և նախատեսված հանձնաժողովով քոլեջի գույքի համար պատասխանատու անձանց մոտ 2022թ. տարեկան գույքագրման, քոլեջի ուսումնական մասնաշենքում ձմռան նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը և անցկացումը:

3. Քոլեջի ֆինանսնտնտեսական գործունեությամբ օրենքվ նախատեսված գործառույթների իրականացման համար:

4. Մասնակցել քոլեջի ֆինանսատնտեսական գործունեությամբ օրենքով նախատեսված գործառույթների իրականացմանը:

4. Մասնակցությունը քոլեջի 2022-2023 ուստարվա 2023թ. գնումների պլանի համաձայն քոլեջի անհրաժեշտ գույքի տարբեր ապրանքների, շինանյութերի, դեղամիջոցների և այլնի ձեռքբերման, ծառայությունների աշխատանքների իրականացման համար քոլեջի տնօրինության և այլ կազմակերպությունների հետ կնքվող երկկողմ պայմանագրերի կնքմանը տարբեր գնումների գործառույթներին իրականացնելու համար, կատարված գնումներին աշխատանքները պարզ երևում են կնքված երկկողմ պայմանագրերի, հարկային հաշիվ վավերագրերի, կատարողական ակտերի առկայությամբ:

5. Քոլեջի աշխատակիցների հետ իրականացվող աշխատանքային հարաբերությունների գործունեությունը ՀՀ սահմանադրության ՀՀ ԱՕ պահանջներին, քոլեջի տնօրենի և քոլեջի աշխատակիցների հետ երկկողմ կնքված պայմանագրերին համապատասխան, իսկ քոլեջի դասաախոսների և ուսանողների հարաբերությունները:

ՀՀ կրթության մասին օրենքով ՀՀ սահմանադրությամբ ՀՀ ԱՕ հոդվածների պահանջների ճիշտ կատարմանը:

6. Ակտիվ մասնակցությունը հանրապետական, համայնքային, քոլեջային կազմակերպված շաբաթօրյակներին Արարատ քաղաքում:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քոլեջում դաստիարակչական աշխատանքներն իրականացվել են ռաուժնական տարեսկզբյան աշխատանքային պլաններով: Այն իր մեջ ներառել է հայրենասիրական դաստիարակության, ազատ ժամանակի կազմակերպման, մարզամշակութային, քաղաքացիա-իրավական դաստիարակության, բարոյագեղագիտական, պրոֆեսիոնալ, առողջ կենսակերպի, գիտակրթական, սոցիալական հնարավորության հետ կապերի և այլևայլ բազմաբնույթ համալիր ուղղությունների, որոնք իրենց արտացոլումն են գտել տարվա ընթացքում իրականացվող կուադրեսկական ժամերին՝ շուրջ 30-40 անգամ պարբերականությամբ, ավելի քան, յուրաքանչյուր կիսամյակում, կուրսերում 3-ական ծնողական ժողովներում, ճանաչողական էքսկուրսայցելություններում: Ապահովվել է ուսանողների ակտիվ մասնակցությունը ներքոլեջային «Ոսկե աշուն»՝ շուրջ 10, «Ուսանողական գարուն»՝ շուրջ 12 միջոցառումներում: Ֆիզիկական և զինդեկի ուժերով կազմակերպվել են ռազմամարզական խաղեր: Լույս է ընծայել շուրջ 27 պատի թերթեր, անց է կացվել Հայաստանին առնչվող տոնացույցային և հիշատակման օրերի շուրջ 8 միջոցառումներ, քոլեջում համակեցության կանոնների, ուսանողների իրավունքների և պարտականությունների լուսաբանման խորհրդակցություններ՝ յուրաքանչյուր ամիս, կազմակերպվել են հանդիպումներ իրավական մարմինների հետ՝ բարեկրթության և վարքի մշակույթի շուրջ: Կազմակերպվել է 2 շաբաթօրյակ, անհատական աշխատանք է տարվել և օգնություն՝ դժվար դաստիարակվող և անբարենպաստ ընտանիքների՝ մեր ուսանողների շրջանում: Անցկացվել են առարկայական, մասնագիտական օլիմպիադաներ, որի արդյունքում ԵՊՀ -ի կողմից կազմակերպված ամենամյա այս տարվա օլիմպիադային մեր քոլեջի շուրջ 16 ուսանողներ «Ռուսաց լեզու» և «Աշխարհագրություն» առարկաներից անցան 2-րդ փուլ, մասնակցել բուհերի, բաց դռների օրերին «Ազատ աշխատատեղ շուկային», «Դիսկոնտ ակումբ»-ի աշխատանքներին, կազմակերպվել է «Սա մեր քոլեջն է, այստեղ մենք տանն են» ֆոտոսեսիաներ: Իրականացվել է հոգեբանական դաստիարակչական աշխատանքներ ուսանողների շրջանում: Ուսումնական տարեսկիզբն սկսվել է «Առաջին կուրսերի շաբաթ» միջոցառմամբ, կազմակերպվել են կուրսերի այցելություններ ներկայացումներ, համերգներ, թանգարաններ, փառատոներ, գրական երաժշտական

ցերեկոյթներ, կազմակերպվել են ինտելեկտուալ խաղեր, «Ուսուցչի օրվան», «Մեր քաղաքը» ցերեկոյթներ: Իրականացվել է ուսանողների հաճախումների ամենօրյա ստուգումներ, դասախոսների ուժերով՝ հերթապահություն քոլեջի հարկերում, իրականացվել է վարձավճարների հավաքագրման ընթացիկ աշխատանքներ, կատարվել է դասալսումներ, առաջադիմության խնդիրների հանգամանալից քննարկումներ: Լուրջ ուշադրություն է դարձվել ուսանող-ծնող-դասախոս կապի խնդիրներին: Բոլոր կուրսերում անց են կացվել ամենամյա խորհրդակցություններ՝ դասավանդող դասախոսների հետ: Իրականացվել են բարեգործական աշխատանքներ, գրքի՝ ներքոլեջային և առանձին դպրոցների աշակերտներին նվիրատվություններ: Կատարվել է համաքաղաքային ծառատունկեր, Ամանորյա միջոցառումներ, շարունակվել է քոլեջի ներքին և արտաքին հարդարման աշխատանքները: Ուսանողները ակտիվ մասնակցություն են ունեցել Արարատ քաղաքի և գյուղի եկեղեցիների աշխատանքներին: Ակտիվ են աշխատել կարիերայի կենտրոնը, գրադարանային և ուսանողական խորհուրդները: Իրականացվել են ուսանողների կողմից արված նկարների ցուցահանդեսներ: Անց է կացվել կուրսըեկական խորհրդի 5 նիստեր՝ կազմակերպադաստիարակչական ավելի քան 18 հարցերի քննարկումներով: Մշակվել է և ողջ ուսումնական տարում իրականացվել է թեմատիկ տարաբնույթ հարցաշարերի քննարկումներ...

Կատարված բոլոր աշխատանքներն ունեն իրենց փաստաթղթային ձևակերպումները:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ընթացիկ տարում ԱՊԲ-ի առանցքային նպատակներից է եղել քոլեջ-աշխատաշուկա կապի ամրապնդումն ու շրջանավարտների հետ ակտիվ համագործակցությունը: Այս առումով, Կարիերայի կենտրոնն իրականացրել է մի շարք միջոցառումներ: Ընդհանուր տեղեկատվություն արդի մասնագիտությունների, աշխատանքի շուկայի, աշխատանքի առաջարկի և պահանջարկի շուկայական հարաբերությունների վերաբերյալ: Իրականացվել է 2022-2023 ուստարվա շրջանավարտների հետ հանդիպում: Տեղեկատվությունների հավաքագրում շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ:

Համագործակցություն ՄՄԾ-ների հետ: ԱՊԲ մասնակցել է «Կրթություն և կարիերա EXPO 2023» ցուցահանդեսին, ՄՄԾ-ը և այլ արտաքին շահառուներ: 2022 թվականին ևս համագործակցության երկկողմ ծրագիր պլանավորվեց Բելառուսի Մոլոդեչնոյի պոլիտեխնիկական քոլեջի հետ: Անցկացվեց հեռավար հանդիպումներ, մրցույթներ և օլիմպիադաներ: Իրականացվել են անհատական խորհրդատվություններ անձնային առանձնահատկությունները և հետաքրքրությունները բացահայտելու ուղղությամբ: Անցկացվել են քննարկումներ, խաղային և դերային պարապունքներ: Ոչ Ֆորմալ դասընթացներ, հաջողակ բիզնեսի և տարաբնույթ աշխատանքների կազմակերպման հմտությունների մասին զրույց - քննարկումներ: Քննարկում կլոր սեղանի շուրջ «Շարունակական հարատև կրթություն և կարիերայի զարգացման հմտություններ», «Կամավորական գործունեություն», «Առաջնորդման և ղեկավարման հմտություններ», «Աշխատանքի նկատմամբ անձի մոտիվացիայի ձևավորում» թեմայով:

2022թ. Սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսխորհրդի նիստը, որին մասնակցեցին կուրսի ավագները, կուրսղեկները: Կուրսերից առաջադրվեցին ամենաակտիվ և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներ՝ ուսխորհրդին անդամակցելու համար՝ հաշվի առնելով նրանց կազմակերպչական հմտությունները, թիմում աշխատելու կարողությունները, պատասխանատվության զգացումը և հասարակական ակտիվությունը: Ուսխորհրդի կազմից ստեղծվեցին հետևյալ հանձնաժողովները.

1. մշակույթի և հայրենասիրական դաստիարակության,
2. սպորտի և ազատ ժամանակի կազմակերպում,

3. ինֆորմացիոն և հասարակայնության հետ կապերի,
4. գիտակրթական,
5. սոցիալական:

Ուսանողական խորհուրդը փորձել է բոլոր կուրսերից ակտիվ ուսանողներին ներգրավել տարբեր հանձնաժողովներում՝ իրենց առօրյան առավել հետաքրքիր դարձնելու նպատակով:

Ուս-ի կազմին ներկայացվել է 2022-2023 ուստարվա միջոցառումների ցանկը, միջոցառման ժամկետները և պատասխանատուներին:

Ուսխորհրդի մշակույթի և հայրենասիրական դաստիարակության հանձնաժողովի անդամները 2022-2023 սեպտեմբերի 1-ին կազմակերպեցին ուստարվա բացման՝ գիտելիքի և դպրության օրվան նվիրված միջոցառում և առաջին կուրսեցիների պարկեշտ ընդունելություն: 2022թ. Հոկտեմբերի 5 - ին տեղի ունեցավ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսխորհրդի 2-րդ նիստը՝ հաստատության ներքին կարգապահական կանոնների կատարման և հաստատությունում սովորողների կարգապահության բարելավման մասին: Որոշվեց անհարգելի բացակայությունները զգալիորեն նվազեցնելու համար տանել մի շարք աշխատանքներ առավել խիստ և նպատակային մեթոդների կիրառմամբ : Միշտ կապի մեջ լինել ռիսկային գոտում գտնվող ուսանողների հետ, որոնք ուսումնական գործընթացը բաց են թողնում անհարգելի պատճառներով, հրավիրել նրանց լսելու ուսխորհրդի նիստերին, զրույցներ տանել նրանց հետ:

Առաջին կիսամյակում Ուս-ի աշխատանքները հիմնականում ուղղված են եղել բարեգործական ծրագրերի իրականացմանը: 14.09.22թ. 3-րդ ՀՀաշվապահական հաշվառում>> կուրսի ուսանող Ալեն Շահվերդյանի առաջարկով Ուս-ը կազմակերպեց բարեգործական ծրագիր՝ օգնություն հայոց բանակին; Ուսանողները ցուցաբերեցին իրենց աջակցությունը՝ կամավորության սկզբունքով: Հավաքվեց զինվորներին անհրաժեշտ պարագաներ; Ուսանողներն ուղարկեցին նաև իրենց նամակները՝ քաջալերելով մեր զինվորներին: Հոկտեմբեր ամսին ԱՊՔ – ի Ուս –ը մասնակցեց նաև Արարատ գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ՝ քահանա Տեր Պողոս Միքայելյանի նախաձեռնած բարեգործական ծրագրին՝ օգնություն սահմանամերձ Երասխավան գյուղի դպրոցի գրադարանին: ԱՊՔ-ի ուսանողությունը մեծ

պատրաստակամությամբ շուրջ 50 կտոր գիրք նվիրեց Երասխավանի դպրոցի գրադարանին:

2022 թվականի դեկտեմբերի 24-ին Արարատի համայնքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպված «Մաքուր պահենք մեր համայնքը» միջոցառմանը մասնակից եղան Արարատի պետական քոլեջի թե՛ աշխատակիցները, և թե՛ ուսանողները: Քոլեջի ուսանողական խորհուրդը միշտ պահպանում և կարևորում է ուսանող-համայնք կապը և փորձում իր հասարակական գործունեությամբ ընդգրկվել համայնքի աշխատանքներում: Արարատի կենտրոնական զբոսայգում իրականացված ծառատունկին ակտիվ մասնակցության համար էլ ֆիզիկական ընկ. Մելոյանը և մի շարք ուսանողներ ստացել են շնորհակալագրեր՝ համայնքի ղեկավարության կողմից:

Ուսխորհրդի մշակույթի և հայրենասիրական դաստիարակության հանձնաժողովի անդամ Ղևոնդյան Անահիտի նախաձեռնությամբ կազմակերպվեց Ամանորյա տոնական միջոցառում- մրցույթ՝ «Դիմակահանդես» թեմայով: Ուսխորհրդի անդամները ինքնուրույն ձևա-վորեցին ու տոնական գեղեցիկ տեսք հաղորդեցին քոլեջին՝ նախասրահի ներքին և արտաքին ձևավորման աշխատանքներում ընդգրկելով նաև իրենց կուրսերի ուսանողներին:

Մեր ուսանողությունը հայրենասեր է և հայրենանվեր: «Մեր անունն է հայկական բանակ» խորագրով առանձնացավ զինղեկ պա-րոն Առաքելյանի և ՈւԽ –ի անդամ Խորեն Կիրակոսյանի կազմակերպված միջոցառումը:

Կրթական համակարգը պատրաստում է ապագայի հայ քաղաքացուն, ով իր մեջ բացի գիտելիքից և այլ արժեքներից, պետք է կրի նաև հայ քրիստոնյայի դարավոր արժեքները: Մեր Սահմանադրությունը ճանաչում է Հայ Առաքելական եկեղեցու բացառիկ դերն ազգային ինքնության պահպանման, հոգևոր և մշակութային դաստիարակության հարցում: Ազգային ինքնությունը դա մտածելակերպ է, որը մեզ համահունչ է դարձնում մեր ազգին բնորոշ քաղաքակրթական տարրերին: Ով դա կանի ավելի լավ, քան եկեղեցին: Ուստի, ՈւԽ խնդրանքով երիտասարդների բարեխոս Սուրբ Սարգիս զորավարի հիշատակության օրը տնօրինությունը հրավիրեց Արարատի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Արտաշեսին և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի դպիր Հրաչ Շահբազյանին՝ ուսանողների համար կարդալու դասախոսություն՝ տոնի խորհրդի վերաբերյալ: ԱՊԲ-ի

գրադարանավարուհի ընկ. Խանեսյանը և «Նախադպրոցական» 3-րդ կուրսի ուսանողները այդ օրը գրադարանը ձևավորել էին տոնին համահունչ և կազմակերպել փոքրիկ ցերեկույթ: Ռուսանդական խորհուրդը մշատական կապի մեջ է գրադարանային խորհրդի հետ:

ՌԻԽ–ի փոխնախագահ Սիրան Բաբայանը, Գիտակրթական հանձնաժողովի պատասխանատու Խորեն Կիրակոսյանը , Սոցիալական հանձնաժողովի անդամ Լարիսա Բաղդասարյանը և «Ֆինանսներ» 3-րդ կուրսի մի շարք այլ ակտիվ ուսանողներ , ընկ. Աբրահամ-յանի գլխավորությամբ և մեծ ջանքերով կազմակերպեցին «Brain Ring >> տնտեսագիտական խաղ- մրցույթը, որին մասնակցեցին տնտեսագիտական բաժնի ուսանողները: Այդ օրը ներկայացվեց նաև «Աշնան շունչ» մրցույթ-ցուցահանդեսը, որի ժամանակ 3-րդ «Հաշվապահական հաշվառում» և 3-րդ «Ֆինանսներ» կուրսի ուսանողները ցուցադրեցին նկարներ /իրենց ձեռքի աշխատանքը/ և ֆոտոներ: Ռուսանողները այս մրցույթին մասնակցեցին մեծ ոգևորությամբ: Խաղի ընդմիջման ժամանակ ամփոփված և հավա-նության արժանացած նկարներից հաղթող ճանաչվեց ֆոտո մրցույթից՝ «Ֆինանսներ» բաժնի 3-րդ կուրսի ուսանող Սարգիս Նազոյանը, իսկ տնտեսագիտական խաղ-մրցույթի հաղթող թիմը «Շուկայաբանություն» 2-րդ կուրսի ուսանողների խումբն էր: Հաղթողները տնօրինության կողմից ստացան պատվոգրեր: Անշուշտ նմանատիպ խաղ- մրցույթները ուսանելի են և օգտակար: Պետք է նշել , որ քոլեջի ուսանողները հետաքրքրված են թե՛ քոլեջում , և թե՛ նրանից դուրս կազմակերպվող տարբեր միջոցառումներով , դասընթաց-ներով, մրցույթներով, օլիմպիադաներով: ԵՊՀ-ի կողմից կազմակերպված ամենամյա հանրակրթական առարկաների օլիմպիադային մասնակցած ԱՊՔ-ի ուսանողներից այս տարի մենք ունեցանք 2-րդ փուլը անցած մասնակիցներ՝ 16 ուսանող «Ռուսաց լեզու» առար-կայից և 1 ուսանող՝ «Աշխարհագրությունից» : Արդյունքները գոհացուցիչ են:

2023 թ. Ապրիլի 5-ից 7-ը կայացած խոշորագույն «Կրթություն Եվ Կարիերա EXPO 2023» միջազգային ցուցահանդեսին մասնակցեց Արարատի պետական քոլեջը, որի կազմակերպչական աշխատանքներին մասնակցեցին նաև ՌԻԽ –ի տարբեր հանձնաժողովների անդամներ և քոլեջի այլ ակտիվ ուսանողներ: Մեր ուսանողները ներկայացրեցին կրթության և աշխատաշուկայի կարիքներն ու պահանջները՝ կարևորելով ՄԿՈւ համակարգի դերը: Սա հնարավորություն էր ևս մեկ անգամ

ներկայացնելու ԱՊԲ-ի առաքելությունը, նպատակները, կարողությունները , կրթական ծրագրերը:

Արարատի պետական քոլեջը ապրիլի 7-ին մասնակցեց նաև Արարատի համայնքապետարանի կողմից կազմակերպված «Կինը և բնութային» ցուցահանդես վաճառքին, ուր մեր քոլեջի տաղանդավոր ուսանողները ներկայացրեցին իրենց յուրահատուկ աշխատանքները:

Ուսխորհուրդը ԱՊԲ-ում իրականացվող ծրագրերին մասնակցելու հնարավորություն է տալիս այն ակտիվ ուսանողներին, ովքեր մինչև այդ չեն մասնակցել ուսանողական կառույցների կողմից իրականացվող տարբեր ծրագրերին՝ նպաստելով ուսանողների հետաքրքրության մեծացմանը մշակույթի, սպորտի, արվեստի և կրթության ասպարեզներում:

Ուսխորհրդի հանձնաժողովների կատարած աշխատանքները կարելի է համարել արդյունավետ: Բոլոր միջոցառումներն էլ նպատակային էին՝ ուղղված ուսանողների ինքնադրսևորմանը, նրանց իրավունքների ու պարտականությունների գիտակցմանը, համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը, հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային համամարդկային արժեքների պահպանմանը, ուսանողների վարքի և վարվելակերպի ձևավորմանը, ուսանող-դասախոս, ուսանող-ծնող, ուսանող-համայնք, քոլեջ-համայնք հարաբերությունների ամրապնդմանը, ինչպես նաև ուսանողների մոտ մարդասիրական աշխարհայացքի ձևավորմանը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Արարատի պետական քոլեջի մանկավարժական բաժինը 2022-2023 ուստարվա I և II կիսամյակներում նախատեսել էր իրականացնել հետևյալ աշխատանքները, որոնք նախապես տեղ են գտել մանկավարժական բաժնի վարիչի աշխատանքային պլանում.

- Ըստ նախապես կազմված, ապա հաստատված գրաֆիկի՝ մանկավարժական բաժնի 10 նիստների իրականացում, որոնք արձանագրվել են:
- 2022-2023 ուսումնական տարվա I և II կիսամյակներում ուսուցանվող առարկաների, մոդուլների, ծրագրերի, օրացուցային պլանների քննարկում:
- Նախապես ներկայացված, հաստատված բաց դասերի, առարկայական դրվածքների ու զեկուցումների ժամանակացույցի կատարման վերահսկողության իրականացում:
- Ուսանողական տոմսերի և ստուգման գրքույկների լրացման աշխատանքների վերահսկման իրականացում:
- Առարկայական կաբինետների աշխատանքային պլանների ստուգում, տարվա ընթացքում կաբինետների վարիչների հետ համագործակցում:
- Մատյաններում գրանցումների և դրանց օրացուցային պլանների հետ համապատասխանության ստուգում և վերահսկողության իրականացում:
- II և III կուրսերում տարբերակված ստուգարքների հարցաշարերի քննարկում և անցկացման վերահսկողություն:
- Տարբերակված ստուգարքներին չներկայացած ուսանողների համար բաց դռների օրվա աշխատանքների կազմակերպում:
- Կիսամյակների ամփոփման, ստուգարքային գրքույկների մեջ գրանցումների ստուգում:
- Մանկավարժական բաժնի, դասախոսների կողմից կազմված դասալսումների գրաֆիկով դասալսումների իրականացում:

Արարատի պետական քոլեջի մանկավարժական բաժինը 2022-2023 ուստարվա ընթացքում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- 2022-2023 ուստարվա համար նախապես մշակված և տնօրենի կողմից հաստատված աշխատանքային պլանի համաձայն իրականացվել է ուսումնական

գործնթացի վերահսկողություն՝ միջին մասնագիտական և արհեստագործական կրթական համակարգում:

- Ուստարվա ընթացքում վերահսկվել է բաժնի դասախոսների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարման ընթացքը:
- Ժամանակին կազմակերպվել է դասամատյաններում դասաբաշխման և կուրսդեկների կողմից գրանցման իրականացումը:
- Վերահսկվել է ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի պատրաստման գործնթացը:
- Տրվել է հանձնարարություններ, կարգադրություններ, ցուցումներ և վերահսկվել՝ դրանց կատարումը:
- Ամենօրյա հսկողության տակ է առնվել ուսանողների հաճախումը և մասնակցությունը դասերին և հաճախումների վերահսկողության վերաբերյալ գրառումներ կատարել գրանցման մատյաններում:
- Կրթական բարեփոխումների, մասնագիտական կրթության որակի ապահովման, գնահատման, ծրագրերի մշակման, հաստատման և իրականացման գործընթացների վերաբերյալ հրավիրվել են 10 նիստեր՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան.:

2023թ օգոստոսի 31-ի ապա հունվարի 5-ի մանկավարժական խորհրդի նիստերում քննարկված և հաստատված մանկավարժական բաժնի առարկայական աշխատանքային պլանները, ծրագրերը վերանայելուց հետո , կատարվել է առարկայական օրացուցային պլանների քննարկում և որոշակի փոփոխությունների վերլուծում:

27. «Արարատի գինու գործարան» ՍՊԸ
28. «Արարատի կոնյակի գործարան» ՍՊԸ
29. «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ
30. «Վեդի Պլաստ» ՍՊԸ
31. «Նոյ Էներջի» ԱՊԸ
32. «Նոյավան» ՍՊԸ
33. «Նեքստ Էլեկտրոնիքս» ՍՊԸ
34. «Սովոանո» ՍՊԸ
35. «Ընկերություն 1982» ՍՊԸ
36. «Նայս Ֆուդ» ՍՊԸ
37. Ա/Ձ Սուրեն Ոսկանյան
38. Ա/Ձ Հայկ Կոստանյան
39. Ա/Ձ Հապետ Դալդայան
40. Ա/Ձ Մաքսիմ Գիքինյան

41. Ա/Ձ Հասմիկ Գեղամյան
42. Ա/Ձ Նժդեհ Ալեքսանյան
43. Ա/Ձ Մուրադ Մուրադյան
44. Ա/Ձ Արմեն Այվազյան
45. Ա/Ձ Հովհաննես Գևորգյան
46. Ա/Ձ Սաթիկ Զաջիկյան
47. Ա/Ձ Լիլիթ Աբրահամյան

2022-2023 ուստարվա ընթացքում համագործակցել ենք տարբեր կազմակերպությունների հետ և ձեռք ենք բերել երկու վճարովի պրակտիկա տեխնկատվական տեխնոլոգիաների ոլորտում լավ արդյունքն ցուցաբերած կազմակերպությունների հետ, դրանք են

- ✓ Ա/Ձ Նվեր Ոսկանյան- գրաֆիկ և վեբ դիզայնի ուսումնական կենտրոն
- ✓ «Ֆրիենդ» ՍՊԸ- տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն:

Պրակտիկայի արդյունքները գոհացուցիչ են, դրա մասին փաստում են մեր ավարտական կուրսերի ուսանողներին պրակտիկայի վայրերի կողմից արված աշխատանքի առաջարկները:

ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանը հասարակական կառույց է, որը ներառում է տեղեկատվական և մշակութային բաղադրիչներ և դրանով նպաստում է ինչպես տեղեկատվության զարգացմանը, այնպես էլ արթնացնում է սեր ընթերցանության և գրքի հանդես:

Գրադարանային խորհուրդը իրականացնում է տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն: ԱՊԲ-ի գրադարանը ունի համակարգված հավաքածու և այն տրամադրում է ուսանողներին, դասախոսական և ուսումնասովորական կազմին՝ ժամանակավոր օգտագործման համար:

Գրադարանի առաջնահերթ խնդիրն է կազմակերպել գրականության վերաբերյալ տեղեկատվություն՝ ընթերցողներին լավագույնս սպասարկելու համար ինչպես նաև նպաստել քոլեջում իրականացվող ուսումնադասատիարակչական աշխատանքներին: 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանով գրադարանային խորհուրդը նախատեսել էր.

- գրադարանային խորհրդի նիստերի կազմակերպում և անցկացում,
- ԿԱՀ-մուտքագրել բոլոր առաջին կուրսերի անձնական տվյալները,
- կազմակերպել դպրոցական գրականության սպասարկման աշխատանքներ առաջին կուրսերում,
- գրքերը չբավարարելու դեպքում բերել այլ գրադարաններից,
- կազմակերպել մասնագիտական գրականության սպասարկման աշխատանքները արհեստագործական բաժնի կուրսերում,
- նոր ընդունված ուսանողներին ծանոթացնել գրադարանից օգտվելու կանոններին, պատրաստել պաստառներ.
- Գիտելիքի և դպրության օրվա,
- Հայաստանի Հանրապետության անկախության 31 - ամյակի,
- ուսուցչի տոնի,
- ուսանողների միջազգային օրվա,
- «Շնորհավոր տոնդ հայ զինվոր» խորագրով,
- «Մեր աղոթքի լեզուն» վերտառությամբ
- «Շնորհավոր տոնդ հայուհի»,

- «Մայր իմ անուշ ու բարի»,
- Հայոց ցեղասպանության 108-րդ տարելիցին նվիրված,
- «Մեր շրջանավարտները» թեմատիկ պաստառներ,
- գրադարանային խորհրդի նիստերի կազմակերպում և անցկացում,
- կազմակերպել և անցկացնել գրադարանային խորհրդի տարեվերջյան նիստ: Ացկացվել են գրադարանային խորհրդի նիստերը բոլոր անդամների մասնակցությամբ, արձանագրվել են անցկացման ամսաթիվը, նիստերին ներկա անձանց անվանացանկը, նիստերի օրակարգը, նիստերի անդամների ելույթները, օրակարգի վերաբերյալ ընդունված որոշումները ստորագրվել են խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից: Այսպիսով՝ վերոնշյալ կետերը առանձնակի ուշադրությամբ և հավուր պատշաճի կատարվել են գրադարանային խորհրդի կողմից, բոլոր պատի թերթերը և նշված ծրագրերը ներկայացվել են ըստ նախատեսված աշխատանքային պլանի: Սակայն՝ նշված կետերով չի սահմանափակվել գրադարանային խորհրդի աշխատանքը, կատարվել են նաև լրացուցիչ աշխատանքներ, անցկացվել են միջոցառումներ, որոնք միտված են եղել բարձրացնելու ուսանողների գեղագիտական ճաշակը՝ նպաստելով գեղագիտական և հայրենասիրական դաստիարակության առաջնահերթության ընկալմանը:

Այս ուսումնական տարում ևս գրադարանային խորհուրդը, ըստ արժանվույն, իր ակտիվ մասնակցությունն ունեցավ նաև ուսումնական գործընթացում՝ նպաստելով դրանց դյուրին իրականացմանը, միևնույն ժամանակ իր ուրույն տեղն ու դերն ունեցավ քոլեջում տեղի ունեցող բազմաբովանդակ միջոցառումներին, որոնց շրջանակում ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցությամբ անցկացվեց միջոցառում՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին, ինչպես նաև Հովհաննես Թումանյանի ծննդյան և միևնույն ժամանակ, գիրք նվիրելու օրվա արթիվ անցկացվեց միջոցառում «Նվիրիր գիրք» խորագրով: Տոնին ընդառաջ տնօրինության, դասախոսների, ուսանողների կողմից գրադարանին նվիրվեցին բազմաթիվ գրքեր, որոնց շնորհիվ գրադարանային ֆոնդը հարստացվեց 30 օրինակ մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ:

Միջոցառումների շարքին կավելացնեն նաև այն պատի թերթերը, որոնք լույս ենք ընծայում ամեն ամիս, թեման ընտրում ենք տվյալ ամսում հիշարժան օրերին համապատասխան, դրանք են մեր ազգային, եկեղեցական, հոբելյանական օրերը, տոները: Քոլեջի պատի թերթի թեմատիկան համապատասխանում է նաև ԱՊԲ-

ում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ձևին և բովանդակությանը, և դրանով նպաստում է այդ աշխատանքների արձյունավետ և որակյալ կրթության իրականացմանը:

ՄԱՆԿԱՎԱՐԺ-ՀՈԳԵԲԱՆ

2022-2023 ուստարում ըստ նախատեսված պլանի կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Ուսումնական տարվա ընթացքում կապ է պահպանվել կուրսղեկների հետ:
2. Դիտարկումներ են կատարվել կուրսերում՝ բացահայտելու համար կուրսերի բարոյահոգեբանական մթնոլորտը, դասախոս-ուսանող փոխհարաբերությունները, եթե խնդիրներ են եղել, բացահայտվել են պատճառները և տրվել համապատասխան լուծումներ:
3. Պահպանվել են հոգեբանական խորհրդատվությունների գաղտնիությունը:
4. Կուրսերում աշխատանք է տարվել ուսանողների հետ, իհարկե քննարկելով կուրսղեկի և տվյալ առարկան դասավանդող դասախոսի հետ:
5. Ուսանողի հետ տարվել է անհատական աշխատանքներ՝ ուսման մոտիվացիան իմաստավորելու և բարձրացնելու նպատակով:
6. Կուրսերում անցկացվել է քննարկումներ, մի շարք հետաքրքիր թեմաների շուրջ (Մարդու կյանքի ուղին և խաչմերուկները: Երեխայի զարգացման գործընթացում դեռահասության փուլի տեղն ու նշանակությունը: Դեռահասների փոխհարաբերությունները չափահասների հետ: «Դժվար» երեխաների վարքագծի ուղղման հոգեբանական հարցերը: Միջանձնային փոխհարաբերությունների էթիկան, դասախոս-դասախոս, դասախոս-ուսանող հարաբերություններում և դրա արտացոլումն ուսումնական գործընթացում), որոնք վերաբերվում են դեռահասության շրջանին:

Մեթոդխորհուրդ

Մեթոդական աշխատանքը մանկավարժական կոլեկտիվի անդամների համակարգված գործունեություն է, որը նպատակաուղղված է նրանց ընդհանուր մանկավարժական ու հոգեբանական, գիտական-տեսական, առարկայական ու մեթոդական պատրաստականության, մասնագիտական վարպետության բարձրացմանը: Ուսուցատնօրինում տարվող մեթոդական աշխատանքը ինքնանպատակ չէ: Այն իրականացվում է սովորողների կրթության և դաստիարակության կայուն արդյունքների ստացման և պահպանման նպատակով: Մեթոդխորհուրդի աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար ուստարվա սկզբին կազմվել և տնօրենի հաստատմանն է ներկայացվել աշխատանքային պլանն ու մեթոդխորհուրդի կազմը: Մեթոդխորհուրդի կազմի մեջ են մտնում՝

Նախագահ – Է. Գ. Գասպարյան
Նախագահի տեղակալ – Ն. Հարությունյան
Անդամներ – Ս. Հայկյան
Մ. Մարգարյան
Լ. Մարտիրոսյան
Ռ. Այվազյան
Ա. Սահակյան
Ն. Գասպարյան:

2022-2023 ուստարվա համար, ըստ աշխատանքային պլանի, նախատեսված են եղել հետևյալ աշխատանքները.

- Մեթոդխորհուրդի կազմի և աշխատանքային պլանի կազմում և ներկայացում տնօրենին՝ հաստատման համար
- Առկա և նոր կրթական չափորոշիչների, կրթական և ծրագրային փաստաթղթերի ճշգրտում
- Առարկայական ծրագրերի ուսումնասիրում և փոփոխությունների քննարկում
- Գրավոր աշխատանքների քանակի, տեսակի և ձևի ընդունում. մեթոդական ցուցումներ դասախոսներին
- Առաջին և երկրորդ կիսամյակներում տնօրենության կողմից հանձնարարվող պարտադիր ստուգողական գրավոր աշխատանքների կատարման վերահսկում և արդյունքների քննարկում
- Բաց դասերի կազմակերպման վերահսկողություն
- Մանկավարժական փորձի տարածման և ներդրման նպատակով փոխադարձ դասախոսումների իրականացում
- Առարկայական դրվածքների անցկացման վերահսկողություն և քննարկում
- Արդյունավետ ուսուցման փորձի բացահայտում, ուսումնասիրում, ընհանրացում և տարածում:

Առկա և նոր կրթական չափորոշիչների, կրթական և ծրագրային փաստաթղթերի ճշգրտում, առարկայական ծրագրերի ուսումնասիրում և փոփոխությունների քննարկում:

Մեթոդխորհրդի գործունեության հիմքում, ըստ առաջնահերթության, դրված են վերանայված պետական կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի ուսումնասիրումը և քննարկումը:

2022-2023 ուստարվա համար ՄԿՈՒԶԱԿ-ը ներկայացրել է «Համակարգչային գեղարվեստական նախագծում» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների վերանայված ուսումնական պլաններն ու մոդուլային ծրագրերը: Մեթոդխորհրդի 2-րդ նիստի ժամանակ ներկայացվել են տվյալ փոփոխությունները մեթոդիստի կողմից, դրվել քննարկման և այնուհետև ներկայացվել հաստատման: Կազմվել և հաստատվել են բոլոր անհրաժեշտ ծրագրերը:

Գրավոր աշխատանքների քանակի, տեսակի և ձևի ընդունում. մեթոդական ցուցումներ դասախոսներին: Առաջին և երկրորդ կիսամյակներում տնօրենության կողմից հանձնարարվող պարտադիր ստուգողական գրավոր աշխատանքների կատարման վերահսկում և արդյունքների քննարկում:

Ուստարվա սկզբին մեթոդիստի և մանկավարժական բաժնի վարիչի համատեղ քննարկում իրականացնելուց հետո կատարվել են պարտադիր ստուգողական գրավոր աշխատանքների նախապատրաստական աշխատանքները. կազմվել են «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» առարկաների պարտադիր ստուգողական գրավոր աշխատանքների բլանկները, դրանք հաստատվել են մանկավարժական բաժնի վարիչի և ուսումնական գծով տնօրենի տեղակալի կողմից: Ստուգողական գրավոր աշխատանքներների առաջադրանքներն ու բնագրերը ընտրվել և կազմվել են վերը նշված առարկաների առարկայական ծրագրերին համապատասխան: Ուսումնական մասով տնօրենի տեղակալի կողմից ստուգողական գրավոր աշխատանքների անցկացման համար կազմվել է գրաֆիկ, և բոլոր աշխատանքները տրվել են գրաֆիկում նշված ժամանակացույցին համապատասխան, իսկ ստուգումն իրականացվել է գնահատման չափանիշներին համապատասխան:

Բաց դասերի կազմակերպման և առարկայական դրվածքների անցկացման վերահսկողություն և քննարկում: Մանկավարժական փորձի տարածման և ներդրման նպատակով փոխադարձ դասալսումների իրականացում: Արդյունավետ ուսուցման փորձի բացահայտում, ուսումնասիրում, ընհանրացում և տարածում:

Մանկավարժական արդյունավետ ուսուցման փորձի բացահայտման, ուսումնասիրման, ընհանրացման և տարածման նպատակով 2022-2023 ուստարվա սկզբին մանկավարժական բաժնի վարիչի և մեթոդիստի համատեղ քննարկման

արդյունքում կազմվել է բաց դասերի և առարկայական դրվածքների իրականացման գրաֆիկ: Բաց դասերի, առարկայական դրվածքների և փոխադարձ դասալսումների նպատակն է եղել ուսումնական գործընթացում դասաժամի արդյունավետության բարձրացումը՝ ուսումնական գործընթացի կարիքների բացահայտման, թերությունների վերհանման և լավագույն փորձի տարածման հաշվին: Բոլոր բաց դասերն ու առարկայական դրվածքներն անցկացվել են գրաֆիկին համապատասխան, իրականացվել են քննարկումներ, վեր հանվել դրական և բացասական կողմերը: Իրականացված աշխատանքները եղել են օրինակելի և նպատակին ծառայող:

Փոխադարձ դասալսումները մանկավարժների ինքնազարգացման ձևերից են: Դրանց միջոցով ուսումնասիրվում և ընդհանրացվում են միմյանց մանկավարժական փորձերը: Փոխադարձ դասալսումները հնարավորություն են ընձեռում բացահայտելու դասախոսների մասնագիտական բանիմացությունը և նրանց հաղորդակցման որակները: Մեթոդիստի կողմից ուստարվա ընթացքում իրականացվել է 46 ժամ դասալսում:

Աշխատանք սկսնակ դասախոսների հետ: Անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում դասախոսներին իրենց գործունեության իրականացման, ուսուցման և դիաստիարակության ձևերի ու մեթոդների կիրառման վերաբերյալ:

Սկսնակ դասախոսների հետ աշխատանք ծավալելիս հաշվի են առնվել մի շարք կարևոր հանգամանքներ, ինչպես՝ դասախոսի տարիքը, կենսափորձը, պատրաստվածության աստիճանը, ինչպես նաև այն հանգամանքը, թե որ խմբերում նա պետք է դասավանդի: Նրանց անշուշտ օգնել և աջակից են եղել մեթոդխորհուրդն ու փորձառու մանկավարժները՝ լուսաբանելով մի շարք նրբություններ՝ պայմանավորված ուսումնական գործընթացի կազմակերպման, պլանավորման և առաջիկայում հնարավոր խնդիրների առաջացման, դրանց շրջանցման կամ հաղթահարման համար: Սկսնակ դասախոսներին տրամադրվել են մեթոդական նյութեր, տրվել խորհուրդներ՝ դասալսումներ իրականացնելու և փորձի փոխանակման նպատակով:

Օրացուցային թեմատիկ պլանների հետ դասամատյաններում գրանցումների համապատասխանության վերահսկում:

Ուստարվա ընթացքում պարբերաբար կատարվել են դասամատյաններում գրանցումների ստուգումներ: Հայտնաբերված սխալների մասին տեղյակ է պահվել ուսումնական գծով փոխտնօրենին, որն էլ դասամատյանի վերջում դիտողություն է հայտարարել տվյալ դասախոսին:

Մեթոդական խորհրդի անցկացված նիստերը:

2022-2023 ուստարում մեթոդխորհուրդը, ըստ աշխատանքային պլանի, անցկացրել է 5 նիստ՝

Նիստ I – 30.12.2022թ.

Օրակարգում՝

1. Մեթոդխորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում
Զեկուցող՝ մեթոդխորհրդի նախագահի տեղակալ Ն. Հարությունյան
2. 2022-2023 ուստարվա օրացուցային թեմատիկ պլանների համապատասխանությունը ՀՀ ԿԳՄՍՆ կողմից կազմված ծրագրերին, մոդուլներին, չափորոշիչներին
Զեկուցող՝ մանկավարժական բաժնի վարիչ Լ. Մարտիրոսյան
3. 2022-2023 ուստարվա բաց դասերի, առարկայական դրվածքների և մեթոդական գեկուցումների կազմակերպումը մանկավարժական բաժնում
Զեկուցող՝ մանկավարժական բաժնի վարիչ Լ. Մարտիրոսյան

Նիստ II – 21.10.2022թ.

Օրակարգում՝

1. Վերանայված պետական կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի քննարկում («Հաշվապահական հաշվառում» և «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտություններ)
Զեկուցող՝ մեթոդխորհրդի նախագահի տեղակալ Ն. Հարությունյան
2. Խոսքի մաքրության կարևորության գիտակցման ձևավորմանը նպաստող մեթոդները
Զեկուցող՝ Գ. Ստեփանյան
3. «Դժվար» ուսանողի անհատական և տարիքային առանձնահատկությունները բացահայտող միջոցները և տվյալ ուսանողներին դասապրոցեսում ներգրավելու մեթոդները
Զեկուցող՝ Ս. Աբրահամյան

Նիստ III – 22.02.2023թ.

Օրակարգում՝

1. Լսարանային դասավանդման պայմաններում ՆԶՊ առարկայի արդյունավետությունն ապահովող մեխանիզմներն ու միջոցները
Զեկուցող՝ Հ. Առաքելյան
2. Տեխնիկական միջոցների և տեղեկատվական-հեռահաղորդակցական համակարգերի կիրառման արդյունավետությունը բարձրացնող մեթոդները
և դրանց ընտրման սկզբունքները
Զեկուցող՝ Դ. Բաբայան
3. Գործնական աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները
Զեկուցող՝ Ա. Մկրտչյան

Նիստ IV – 14.04.2023թ.

Օրակարգում՝

1. Ուսանողների ուսումնախմացական գործունեության ակտիվացման մեթոդներն ու ձևերը
Ձեկուցող՝ Մ. Առաքելյան
2. Անգլերեն լեզվի բանավոր խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքները
Ձեկուցող՝ Ք. Սաֆարյան
3. Անհատական աշխատանքը որպես ուսանողի անձի ինքնակազմակերպման և ինքնադրսևորման միջոց
Ձեկուցող՝ Շ. Սուսունյան

Լիստ V – 03.06.2023թ.

1. 2022-2023 ուստարվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

ՉԻՆՂԵԿԻ, ՔՊ ՇՏԱԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

- Թիվ 58831 զորամասի հետ համատեղ կազմվել է ռազմահայրենասիրական դաստիարակության 2022-2023թթ. ուստարվա համատեղ միջոցառումների պլան, որը 25.08.22թ. հաստատվել է ԱՊԲ-ի տնօրենի և զորամասի հրամանատարի կողմից:
- 01.09.22թ. նոր ուսումնական տարին սկսելու <<դպրության և գիտելիքի օրվան>> նվիրված միջոցառմանը հրավիրվել և մասնակցել է նաև զորամասի ներկայացուցիչ մայրը՝ Ա. Բաթոյանը:
- Համաձայն միջոցառումների պլանի ԱՊԲ-ի 1 ֆինանսներ կուրսի ուսանողների հետ կազմակերպվել է այց Եռաբլուր՝ Արցախյան բոլոր պատերազմներում զոհված հերոսներին հարգանքի տուրք մատուցելու նպատակով:
- Կազմվել և հաստատվել է օրացույցային պլաններ բոլոր կուրսերի համար:
- Համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ 13.05.2021թ. N29-L և ԱԻՆ 13.04.2021թ. N418-L համատեղ հրամանների քվեջում ստեղծվել է Աղետների ռիսկի կառավարման խորհուրդ:
- 08.04.2022թ. ԱԱՊԲ-ի N1 որոշման հիման վրա 01.09.2022թ-ին իրականացվել է Քաղպաշտպանության պլանների ճշգրտում:
- Մարզային ԱԻՆ վարչության հետ համատեղ 2023թ. ապրիլ ամսին անցկացվել է ԱՊԲ ուսանողների և դասախոսական անձնակազմի տարհանում:
- 27.01.2023թ. ուսանողների հետ կազմակերպվել և անցկացվել է միջացառում նվիրված Հայոց բանակի կազմավորման 31-րդ տարելիցին, որը կրում էր << Խաղաղություն խրամատներին>> խորագիրը:
- Կազմվել է ԱՊԲ-ում սովորող 2007թ-ին ծնված պատանիների ցուցակները և անձնական գործերը: Բոլորը ներկայացվել են նախազորակոչային բժշկական հանձնաժողովի ստուգմանը: Սկզբում Արարատի բժշկական կենտրոն, այնուհետև Արտաշատի զինկոմիսարիատ:
- Կազմավորել ենք << Պատանի հրշեջների>> խումբ ուսանողներից, որոնք մասնակցել են շրջանի մրցաշարին: Ունեցել ենք մեկ հաղթող, ով մասնակցել է նաև Արարատի մարզային հավաքականի կազմում և գրավել է 2-րդ տեղը:

- 2023թ-ի ապրիլ-մայիս ամիսներին բոլոր ուսանողները անցել են << կրակային պատրաստության>> դասընթացներ և կրակել ուսումնական զենքից: Անցկացվել է նաև մեկօրյա դաշտային պարապմունքներ քոլեջի տարածքում:
- Ուս տարվա ավարտին բոլոր երկրորդ կուրսի ուսանողների համար կազմվել է ՔՊ և ԱԻ հարցաշարեր 46 հարցերից բաղկացած, որից բոլորը հանձնել են ստուգարք:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Կրթության որակը բավականին բարդ ու տարողունակ մի հասկացություն է, որի կարևորությունը շեշտվում է նաև կրթությանն առնչվող միջազգային տարբեր փաստաթղթերում, ինչպես նաև տեղական օրենսդրություններում: Կրթության որակ սահմանելով՝ օրենսդիրները հիմնականում նպատակ են ունենում սահմանել կրթության չափելի արդյունքներ, որոնք, կախված երկրից ու համատեքստից, որոշակիորեն տարբերվում են:

Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց:

ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքը ներդրվել է դեռևս 2009 թվականից, և, չնայած դրան, այդ գործընթացում դեռևս անելիքները և ծրագրերը շատ են: ԱՊԲ-ն մշտապես փորձում է հետազոտել և բացահայտել իր կարիքները: Հիմնական խնդիրն այն է, որ դրանք լիովին և հստակ ընկալվեն դասախոսական կազմի կողմից: Ընդհանրական պատկերացումների փուլը, կարելի է ասել, որ մենք արդեն անցել ենք. կարևորը որոշակի կրթական գործընթացների, ուսանողների առաջխաղացման և ձեռքբերումների հետ կապված խնդիրների լուծումները փնտրելն ու գտնելն է: Առկա են մի շարք կարևոր գործոններ, որոնք, չնայած մշտապես արձարձմանը և քննարկմանը, դեռևս մնում են անցումային: Դրանք են՝ կրթական համակարգում գործող ծրագրերի վերանայման խնդիրը, դասավանդման նոր մեթոդների ներդրումը, կրթական հաստատության կապը գործատուների հետ, որակի ապահովման առավել համակարգված և հստակեցված մեխանիզմների մշակման և ներդրման խնդիրը, ուսումնառության ռեսուրսները, օժանդակ ծառայությունները և այլն: Կապված կրթական համակարգում գործող ծրագրերի վերանայման հետ՝ պետք է նշել, որ այս խնդիրը շատ ավելի համապետական բնույթ է կրում, և, չնայած այն հանգամանքին, որ այն բազմիցս քննարկվել է, այնուամենայնիվ դեռևս չենք կարող արձանագրել, որ ունենք մրցունակ և որակյալ կրթական ծրագրեր: Նույնը կարելի է ասել նաև դասավանդման նոր մեթոդների ներդրման մասին: Այս թեման գտնվում է քննարկումների բուրգի վերին շերտերում, սակայն չի կարելի ասել, որ դրանք կիրառելի են կամ կիրառվում են բոլորի կողմից: Իմ կողմից կատարված դասախոսումների

արդյունքում, եկել եմ այն եզրահանգման, որ դեռևս արմատացած է կամ իներցիայով շարունակվում է դասավանդման ավանդական դասա-խոսակենտրոն մոդելը, և այս կոնտեքստում նոր մեթոդների մասին խոսք լինել չի կարող: Կարծում եմ, որ դեռևս կա խնդիր դրանց ընկալման և կիրառելիության հետ կապված, այսինքն՝ կախված առարկայի կամ մոդուլի առանձնահատկությունից՝ դասավանդման որ փուլում և ինչպես կարելի է դրանք կիրառել: Կա նաև տարակարծություն՝ կապված դրանց արդյունավետության հետ: Այս առումով պետք է կարևորել առանձին մեթոդական բնույթ կրող վերապատրաստումները՝ միտված ոչ այնքան ընդհանուր, որքան առանձին մասնագետների և նրանց կողմից դասավանդվող առար-կաները ժամանակակից ուսանողին հասանելի դարձնելուն:

Կա խնդիր նաև կրթողի և սովորողի միջև հստակ օտարվածության, ինչն էլ բերում է համա-պատասխան մոտիվացիայի բացակայության կամ սակավության: Որպես այս փակուղու ելք՝ կա-րելի է կրթական գործընթացին ապահովել սովորողների մասնակցությունը, որպես գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով: Այս սկզբունքի համաձայն սովորողի ու ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն և հարգանք, քանի որ կրթողները իրենք ևս սովորողներ են և սովորողը կարող է աղբյուր հանդիսանա կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար:

Քոլեջը, որպես միջին մասնագիտական կրթական հաստատություն, ունի խնդիր իր շրջանավարտներին դեպի աշխատաշուկա ուղղորդելու: Այստեղ հսկայական է գործատուների հետ համա-գործակցության կարևորությունը, որի վերջնական արդյունքն այն պետք է լինի, որ գործատուն և քոլեջը միմյանց հետ խոսեն նույն լեզվով, որպեսզի կարողանան հստակ բացահայտել խնդիրները և պարզել, թե ինչը պետք է շտկել կրթության որակի ցանկալի մակարդակին հասնելու համար: Կարևոր է կրթության որակի և աշխատաշուկայի կարիքների համապատասխանության խնդիրը: Այս առումով անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել նաև պրակտիկայի դերի և նշանակության վրա: Վերջինիս արդյունավետությունը պայմանավորված է գործատու-քոլեջ-ուսանող շղթայով, որի յուրաքանչյուր օղակ պետք է ունենա իր հստակ ծրագիրը և պարտականություն-ների շրջանակը: Կարևոր է շնորհված որակավորումների արժանահավատության հարցը: Ի վեր-ջո, առանց գործատուների հետ արդյունավետ համագործակցության, հնարավոր չէ ապահովել

աշխատաշուկայի կողմից պահանջված մասնագետներ և որակավորումների ճանաչելիություն:

2022-2023 ուստարվա ընթացքում անցկացվել է կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի 4 նիստ՝ քոլեջի դասախոսական և վարչական կազմի մասնակցությամբ: Քըն-նարկվել են տարբեր բնույթի հարցեր՝ սկսած 2022-2023 ուստարվա քոլեջի կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի (հանձնաժողովի) աշխատանքային պլանի քննարկումից, հաստատումից, ենթակառուցում ընդգրկված անդամներին հանձնարարականների բաշխումից, վերջացրած կրթության որակի բարձրացմանը նպաստող բազմաբնույթ այլ ակտուալ հարցերով:

Արձանագրվել են բոլոր նիստերը:

Ուսումնասիրվել են 2023թ. ընթացքում տրված բոլոր 1-ին կուրսերի պարտադիր ստուգողական աշխատանքների որակական արդյունքները հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, ան-գլերեն, հանրահաշիվ, երկրաչափություն առարկաներից ու կատարվել է որակական վերլուծություն:

Իրականացվել է նաև դասախոսների /վարպետների/ դասավանդած առարկաների/մոդուլների/ ինքնավերլուծությունները: Շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի և մանկավարժական աշխատողների մասնագիտական ունակությունների գնահատումը:

Այսպիսով, կրթության ներքին որակի ապահովման խնդիրները և դրանց լուծման մեթոդներն ու միջոցները բազմազան են և քոլեջում մշտապես նորանոր քայլեր են ձեռնարկվում հատկապես նրա առաքելությանը համապատասխան գործելու ուղղությամբ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ)

(01.01.2021թ. – 01.01.2022թ. ժամանակահատվածի համար)

Պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը ՀՀ Կրթության և գիտության նախարարություն

Համակարգի բոլոր ՊՈԱԿ-ների գծով ամփոփ (ընդգծել)

Պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումը “Արարատի պետական քոլեջ” ՊՈԱԿ

	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգում (անվանումը)	Ծ ա ծ կ ա գ ի թ ը
Բաժին		09
Խումբ		03
Դաս		01, 02
Ամբողջ ծածկագիրը	X	

հազ. դրամ

1	2	Հաշվետու ժամանակաշրջանի ծրագրային ցուցանիշը	Հաշվետու ժամանակաշրջանի փաստացի (դրամարկային) ցուցանիշը	Շրագրային և փաստացի ցուցանիշների միջև տարբերությունը (սյունակ 3 - սյունակ 4)	Ժամկետանց պարտավորություններ
1	Դրամական միջոցների տարեսկզբի (հաշվետու ժամանակաշրջանի սկզբի) մնացորդ	177.11	177.11		
2	Գ ո ռ ծ ա ռ ն ա կ ա ն ե կ ա մ ո տ ն ե թ	x	x	x	x
2.1	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԻՑ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԻՑ	139788.92	139790.92	12.00	
	այդ թվում	x	x	x	x
2.1.1	Բյուջեներից ստացվող եկամուտներ	120632.10	120632.10	0.00	
	այդ թվում	x	x	x	x
2.1.1.1	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից	120582.10	120582.10	0.00	
2.1.1.2	Եկամուտներ համայնքների բյուջեներից	50.0	50.0	0.00	
2.1.2	Այլ աղբյուրներից ստացվող եկամուտներ	19146.82	19158.82	-12.00	
	այդ թվում	x	X	x	x
2.1.2.1	Ապրանքների մատակարարումից				
	այդ թվում	x	x	x	x
2.1.2.1.1	Պետական ոչ առևտրային կազմակերպություններից				

2.1.2.1.2	Այլ աղբյուրներից				
2.1.2.2	Ծառայությունների մատուցումից	19146.82	19158.82	12.00	
	այդ թվում	x	x	x	x
2.1.2.2.1	Պետական ոչ առևտրային կազմակերպություններից				
2.1.2.2.2	Այլ աղբյուրներից	19146.82	19158.82	12.00	

2.2	ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՓԵՎՈՎ ՍՏԱՅՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	120582.10	120582.10	0.00	
	այդ թվում	x	x	x	x
2.2.1	Բյուջեներից ստացվող դրամաշնորհներ	120582.10	120582.10	0.00	
	այդ թվում	x	x	x	x
2.2.1.1	Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից	120582.10	120582.10	0.00	
2.2.1.2	Դրամաշնորհներ համայնքների բյուջեներից				
2.2.2	Օտարերկրյա կառավարություններից ստացվող դրամաշնորհներ				
2.2.3	Միջազգային կազմակերպություններից ստացվող դրամաշնորհներ				
2.2.4	Այլ դրամաշնորհներ				
2.3	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՏԱՅՎՈՂ ՍՈՒԲՍՊԻԴԻԱՆԵՐ				
2.4	ԳՈՐԾԱՌԱԿՎԱՆ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ				
2.5	ԸՆԴԱՄԵՆԸ ԳՈՐԾԱՌԱԿՎԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 2.1 + տող 2.3 + տող 2.4)	139778.92	139790.92	12.00	
3	Գ ո ղ ա ղ ի յ ա ղ ի ն յ ի ն յ ի ն յ ի ն	x	x	x	x
3.1	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՄԱՐԵՑՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	120296.98	120265.09	31.90	
3.2	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	7410.77	73.51.72	59.05	
	այդ թվում	x	x	x	x
3.2.1	Պետական ոչ առևտրային կազմակերպություններից	7410.77	73.51.72	59.05	
3.2.2	Այլ աղբյուրներից				
3.3	ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ				
	այդ թվում	x	x	x	x
3.3.1	Պետական ոչ առևտրային կազմակերպություններից				
3.3.2	Այլ				
3.4	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ	11766.85	11766.85	0.0	
	այդ թվում	x	x	X	x
3.4.1	Կենսաթոշակներ				
3.4.2	Կրթաթոշակներ	11766.85	11766.85	0.0	
3.4.3	Այլ նպաստներ				
3.5	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	150.0	130.0	20.0	
	այդ թվում	x	x	x	x
3.5.1	ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ, ՏՈՒՅԺԵՐ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐ	150.0	130.0	20.0	
	այդ թվում	x	x	x	x
3.5.1.1	Բյուջեներ կատարվող վճարումներ	150.0	130.0	20.0	

	այդ թվում	x	X	x	x
3.5.1.1.1	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե	150.0	130.0	20.0	
	այդ թվում	x	x	x	x
3.5.1.1.1.1	Հարկեր և տուրքեր	150.0	130.0	20.0	
3.5.1.1.1.2	Այլ				
3.5.1.1.2	Համայնքներ և բյուջեներ				
	այդ թվում	x	x	x	x
3.5.1.1.2.1	Հարկեր և տուրքեր				
3.5.1.1.2.2	Այլ				
3.5.1.2	<u>Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ</u>				
3.5.2	ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ՎՆԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ				
3.5.3	ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ				
	այդ թվում	x	X	x	x
3.5.3.1.	<u>Այլ քննադիմ ծախսեր</u>				
3.5.3.2	<u>Այլ կապիտալ ծախսեր</u>				
3.6	ԸՆԴԱՄԵՆԸ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3 + տող 3.4 + տող 3.5)	139624.60	139513.65	110.94	
4	ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող 2.5 – տող 3.6)	154.33	277.27	-122.94	
5	ԶՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԿՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող 5.1 + տող 5.2)	-44.00	0.00	-44.00	
5.1	Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
5.2	Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	-44.00	0.00	-44.00	
6	ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող 4 + տող 5)	110.33	277.27	166.94	
7	ԴՐԱՄԱԿԱՆ ԱՅԼ ՀՈՍՔԵՐ (տող 7.1 + տող 7.2)				
7.1	Դրամական միջոցների այլ մուտքեր				
7.2	Դրամական միջոցների այլ ելքեր				
8	ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ԶՈՒՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (տող 6 + տող 7)	110.33	277.27	-166.94	
9	Դրամական միջոցների տարեվերջի (հաշվետու ժամանակաշրջանի վերջի) մնացորդը (տող 1 + տող 8)	287.44	454.38	-166.94	

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական համակարգ	ուսանող /թիվ/	ընդամենը գումար
Միջին մասնագիտական	32	1548490
Նախնական մասնագիտական /արհեստագործական	0	0
Օգնություն		1548490

2020 - 2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Կրթական համակարգ	բյուջե	արտաբյուջե	ընդամենը /գումար/
	գումար	գումար	
Միջին մասնագիտական	42634700	5774060	48408760
Նախնական մասնագիտական /արհեստագործական/	9203800	677500	9881300

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ



Թեման	Նպատակը	Արդյունքը	Իրականացման ժամկետը
Ֆինանսատական և ստեղծագործական մտածողություն:	Մասնակիցներին ներկայացվել է մտածողության գործողությունը, այնուհետև դասընթացի վերլուծությունը:	Մասնակիցների մոտ զարգացավ քննադատական և ստեղծագործական մտածողությունը:	Մեկտեմբեր-հոկտեմբեր
Հաղորդակցում:	Մասնակիցներին ներկայացվել է հաղորդակցման հմտությունները:	Ծվման գործընթացում սովորողների մոտ զարգացավ հաղորդակցման հմտությունները:	Մեկտեմբեր-հոկտեմբեր
Անհատական խորհրդատվություն:	Բացահայտվեց մասնակիցների առանձնահատկությունները:	Կարիերայի խորհրդատուն իրազեկված է տվյալ մասնակցի անձնական հատկանիշների, կարողությունների և հմտությունների մասին:	Մեկտեմբեր-հոկտեմբեր
Խաղ-բանավեճ	Իրազեկվեց թե ինչպես են իրականացվում բանավեճերը:	Մասնակիցները գիտեն, թե ինչպես կազմակերպել բանավեճ, ինչպես նաև գիտեն, թե ինչպես մասնակցել բանավեճերին:	Նոյեմբեր-դեկտեմբեր
Եվրոպական առանցքային ութ կարողունակությունները:	Ոչ ֆորմալ դասընթաց անցկացվեց եվրոպական առանցքային ութ կարողունակությունների վերաբերյալ :	Տեղեկացված է ութ կարողունակություններին, որոնք ապահովում են անձի մրցունակությունը աշխատաշուկայում:	Նոյեմբեր-դեկտեմբեր
Հեռավար հանդիպում շրջանավարտների հետ:	Կարիերայի խորհրդատուն հատակ ինֆորմացիա հավաքագրեց նրանց զբաղվածության մասին:	Կարիերայի կենտրոնը իրազեկված է թե որտեղ են աշխատում տվյալ շրջանավարտները:	Նոյեմբեր-դեկտեմբեր
Շարունակական հարատև կրթություն:	Ուսանողներին ՀՀ շարունակական կրթության համակարգի սկզբունքների վերաբերյալ գիտական գիտելիքներ հաղորդվեց ու դրանց հիման վրա ձևավորվեց սեփական կարիերան պլանավորելու կարողությունները:	Տեղեկացված է բուհերում գործող մասնագիտություններին և աշխատաշուկայի պահանջներին:	Հունվար-փետրվար
Անհատական խորհրդատվություն:	Ծանոթացավ Գլխավոր թեստին:	Գիտի և կարողանում է լրացնել Գլխավոր թեստը: Իրազեկված է, թե ինչ նպատակ է հետապնդում այն:	Հունվար-փետրվար
Առաջնորդման և դեկավարման հմտություններ:	Ձեռք բերեցին գիտելիքներ լիդերության, լիդերին բնորոշ հատկությունների մասին: Ներկայացվեց լիդերների հիմնական ոճերը դեկավարման գործունեության համատեքստում:	Սովորողների մոտ ձևավորվեց լիդերության նախնական հմտությունները:	Մարտ-ապրիլ
Աշխատանքի նկատմամբ մտելիվացիայի ձևավորում:	Աշխատանքի նկատմամբ սովորողների մոտ ձևավորվեց դրական մտելիվացիա:	Տեղեկացված է աշխատանքային պահանջներին:	Մարտ-ապրիլ
Հանդիպում ոլորտային մասնագետների հետ:	Ծանոթացավ ոլորտային մասնագետների նոր սկզբունքներին:	Ավելի լավ պատկերացում ունի ոլորտի վերաբերյալ:	Մարտ-ապրիլ
Համայնքային EXPO ցուցահանդես:	Մասնակիցները ներկայացրեցին քոլեջում գործող	Ավարտական դասարաններում սովորող աշակերտներսները տեղեկացան քոլեջում գործող	Մարտ-ապրիլ

	մասնագիտությունները:	մասնագիտությունների մասին:	
Այցելություններ բարձրագույն հաստատություններ:	Ծանոթացան բարձրագույն հաստատություններում ընդունելության համակարգին:	Բրազելիված է բուհերում գործող օրենսդրությանը և կրթական համակարգին:	Հոկտեմբեր-մայիս
Հանդիպումներ ՄՄԾ-ների հետ :	Գարիերայի խորհրդատուն տեղեկացված է տարածաշրջանի թափուր աշխատատեղերին:	Գարիերայի կենտրոնը ունի հստակ տեղեկություն թափուր աշխատատեղերի վերաբերյալ:	Մեպտեմբեր-մայիս



ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2022-2023 ուստարվա կառավարման խորհրդի աշխատանքներն իրականացվել են ըստ աշխատանքային պլանի: Առկա և առցանց եղանակով կազմակերպվել են նիստեր և արձանագրվել, որոնց ժամանակ քննարկվել են բազմաթիվ հարցեր, խնդիրներ ու տրվել լուծումներ: Նիստերի ընթացքում անրադարձ է կատարվել ընդունելության հետ կապված հարցերին, ուստարվա ընթացքում պատշաճ գործունեության կազմակերպման համար աշխատանքային խորհուրդների և հանձնաժողովների ստեղծման, ուսանողներին կրթաթոշակ նշանակելու հարցին:

Անցկացվել է քոլեջի տնօրենի թափուր տեղի համալրման մրցույթ: Ուսումնական հաստատության զարգացման 5-ամյա ծրագիրը ներկայացնելուց հետո տնօրենի հավակնորդին, խորհրդի 5 անդամների կողմից՝ պատահական ընտրությամբ, տրվել է լիազոր մարմնի կողմից հաստատված հարցաշարից 5 հարց: Հնչեցրած հարցերի պատասխանները 5 խորհրդի անդամների կողմից գնահատվել են բավարար:

Այնուհետև կատարվել է փակ քվեարկություն: Քվեարկության արդյունքում հավակնորդ Էլլա Գագիկի Գասպարյանը հավաքել է 9 (ինը) կողմ ձայն և տնօրենի թափուր տեղի համար անցկացված մրցույթի արդյունքում ճանաչվել հաղթող:

Կառավարման խորհրդի ամփոփական քննարկման ու կայացրած որոշումների հիման վրա կատարվել են մոդուլային ծրագրերի վերամշակումներ՝ կապված թե՛ ՄԿՈՒՉԱԿ-ի կողմից մասնագիտությունների ուսումնական պլանների վերանայման և թե՛ քոլեջում նոր մասնագիտությունների լիցենզավորումից հետո առարկայական և մոդուլային ծրագրերի կազմման հետ, որոնք կապահովեն ուսումնական գործընթացի լիարժեք կազմակերպումը:

Կառավարման խորհրդի անդամներն անմիջականորեն մասնակցել են քոլեջի զարգացման ծրագրերի, հեռանկայաին խնդիրների լուծմանը, կատարել ֆինանսատնտեսական հարցերի ընթացիկ վերահսկողություն:

Կառավարման խորհրդի կողմից վերանայվել, քննարկվել և հաստատվել է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստաժգործական/ կրթական համակարգում առկա բոլոր մասնագիտությունների վճարովի

համակարգի վարձավճարը չափը, ինչպես նաև՝ կարճաժամկետ ուսուցման դասընթացների վարձավճարի չափը:

Կապված կառավարման խորհրդի կազմում տեղի ունեցող փոփոխությունների հետ՝ տեղի են ունեցել քննարկումներ, առաջադրվել նոր թեկնածուներ ու ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը:

Ուսանողական խորհրդի կազմի փոփոխության հետ կապված, կառավարման խորհրդի նախագահը, հրավիրել արտահերթ նիստ՝ քննարկելու ուսանողական խորհրդի ներկայացուցչի թափուր տեղի համալրումը իրականաց-նելու նպատակով: